Մրցույթ՝ «Երևանի Հ. Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ինֆորմատիկա» (3 դասաժամ), «ԹԳՀԳ» (12 դասաժամ),«Մաթեմատիկա» (33 դասաժամ), «Բնություն» (6 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (2 դասաժամ), «Պատմություն» (5 դասաժամ), «Իմ հայրենիքը և աշխարհը» (9 դասաժամ), «Իմ հայրենիքը» (9 դասաժամ), «Անգլերեն» (3 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (18 դասաժամ), «Կերպարվեստ»(4 դասաժամ), «Տեխնոլոգիա» (1 դասաժամ), «Երաժշտություն» (4 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են **2024թ. նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 22-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Մրցույթը տեղի կունենա **2024թ. նոյեմբերի 29-ին՝ ժամը 13:00-ին,** Երևանի Հ. Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Երևան, Դաթաշեն, 4-րդ թաղամաս: Տեղեկությունների համար զանգահարել (010) 36-92-41 հեռախոսահամարով: